



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 82787 գործարքներ, որոնց քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 8.1%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 6.2%-ով :

2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 27608 օտարման գործարքների 79.7%-ը կազմել են առուվաճառքները, 19.0%-ը՝ նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 32.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 2.2%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 18.3%-ով: 2008թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6351 առուվաճառքի գործարքների 62.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2008թ. երկրորդ կիսամյակում, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.3%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 29.7%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2008թ.
Կենտրոն	463000	491100	475500
Արաբկիր	377300	405500	401200
Քանաքեռ-Զեյթուն	286100	308400	303000
Նոր-Նորք	242900	273800	267500
Ավան	240200	273000	264800
Էրեբունի	243100	272800	266800
Շենգավիթ	256900	281400	274400
Դավթաշեն	267200	301200	283200
Աջափնյակ	251800	271100	272500
Մալաթիա-Սեբաստիա	241300	260700	260400
Նուբարաշեն	131600	159900	149100
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>272900</b>	<b>299900</b>	<b>292600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2008թ. առաջին կիսամյակի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 9.9%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2389 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 7.9%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 26.6%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	110800	140900	121200
	Ապարան	29700	35900	32300
	Թալին	39200	46300	41800
Արարատ	Արտաշատ	89000	106600	93700
	Մասիս	106200	137000	124300
	Վեդի	67000	83400	77700
	Արարատ	57800	68500	59200
Արմավիր	Վաղարշապատ	137300	174500	159700
	Արմավիր	102400	127300	115100
	Մեծամոր	64700	88400	75400
Գեղարքունիք	Սևան	69500	102400	84600
	Գավառ	37800	50700	44200
	Սարտունի	56300	70800	66200
	Վարդենիս	27300	33100	30400
	Ճամբարակ	15300	16600	15900
Լոռի	Վանաձոր	77100	102000	86400
	Ստեփանավան	40700	48700	45100
	Սպիտակ	50800	63100	60400
	Ալավերդի	27000	32700	29100
	Տաշիր	27400	33100	30100
	Թումանյան	5500	5600	5600
	Շամլուղ	3100	3200	3200
	Ախթալա	12100	13000	12800
Կոտայք	Աբովյան	151500	176500	166000
	Նոր Հաճն	109200	137000	119100
	Բյուրեղավան	79400	115400	94300
	Եղվարդ	99500	125800	111800
	Հրազդան	55800	73600	64100
	Ծաղկաձոր	105400	166000	140600
	Չարենցավան	68400	97400	85000
Շիրակ	Գյումրի	77900	115200	92100
	Արթիկ	47900	59100	53300
	Մարալիկ	25800	28500	26400
Սյունիք	Գորիս	78700	113300	98800
	Կապան	71500	101300	84200
	Սիսիան	56500	82800	67800
	Մեղրի	41100	48700	45200
	Ագարակ	26300	29900	28700
	Քաջարան	36900	52800	45200
	Դաստակերտ	6900	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	65600	80900	72300
	Եղեգնաձոր	82900	103500	92900
	Զերմուկ	113300	137200	122700
Տավուշ	Դիլիջան	73900	103900	85900
	Իջևան	97800	138900	115100
	Բերդ	35200	40300	38000
	Նոյեմբերյան	28700	30800	29800
	Այրում	20900	21100	21100

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 13.5%, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 29.5%:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2743 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 591, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2152: 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 9.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 12.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 8.6%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում, 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 27.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 43.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 22.0%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2008թ.
Կենտրոն	474000	506900	488800
Արաբկիր	389300	437300	408600
Քանաքեռ-Զեյթուն	290200	323200	311100
Նորք-Մարաշ	243700	305900	274700
Ավան	244600	287900	270800
Էրեբունի	246800	289000	270700
Շենգավիթ	260500	292300	277700
Դավթաշեն	271500	320000	292000
Աջափնյակ	256200	298600	278300
Մալաթիա-Սեբաստիա	245200	289900	269900
Նուբարաշեն	134000	166700	154500
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>277800</b>	<b>319800</b>	<b>299700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 6.7%, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 15.1%:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2007թ.	երկրորդ կիսամյակ 2008թ.	առաջին կիսամյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	114900	144600	124400
	Ապարան	33500	38600	35300

	Թային	42100	48500	44900
Արարատ	Արտաշատ	93600	110300	99100
	Մասիս	108900	140700	127500
	Վեդի	69100	91500	84000
	Արարատ	62600	70100	64600
Արմավիր	Վաղարշապատ	140200	178400	163000
	Արմավիր	104400	130600	119400
Գեղարքունիք	Սևան	71300	104700	86900
	Գավառ	40500	53600	46300
	Մարտունի	58300	77100	69400
	Վարդենիս	30700	36400	32500
	Ճամբարակ	18600	21100	19700
Լոռի	Վանաձոր	82100	107200	91100
	Ստեփանավան	43800	53300	50200
	Սյիտակ	53400	67300	64500
	Այվերդի	30000	36600	31500
	Տաշիր	29400	37200	33500
	Թումանյան	8700	10300	9500
	Շամլուղ	5800	7300	6300
	Ախթալա	15000	16100	15700
Կոտայք	Աբովյան	157000	191000	171400
	Նոր Հաճն	113600	141700	124000
	Բյուրեղավան	81500	118300	97000
	Եղվարդ	102600	132000	115600
	Հրազդան	59100	78600	67100
	Ծաղկաձոր	158300	262100	213900
	Չարենցավան	70700	100400	87000
Շիրակ	Գյումրի	82900	117300	96200
	Արթիկ	50200	62200	56100
	Մարալիկ	28900	32500	30400
Սյունիք	Գորիս	81800	122900	101100
	Կապան	74800	103400	87900
	Սիսիան	59100	84700	70200
	Մեղրի	43500	51000	48600
	Ագարակ	28000	33100	31400
	Դաստակերտ	9800	10400	10200
Վայոց Ձոր	Վայք	67400	84100	76700
	Եղեգնաձոր	85700	107300	98200
	Ջերմուկ	61200	95700	74600
Տավուշ	Դիլիջան	77600	114400	90700
	Իջևան	100300	140500	119700
	Բերդ	38100	42000	40200
	Նոյեմբերյան	33300	36200	35200
	Այրում	22400	23000	22800

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 14.2%, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 31.3%:

Ընդհանուր առմամբ, 2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 11294 միավոր /8652.69 հա/ հողեր, որից Երևանում՝ 578 միավոր /83.48 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 229 միավոր /85.85 հա/ հողեր, որից Երևանում՝ 105 միավոր /18.92 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4612 միավոր /7875.38 հա/, որից Երևանում՝ 23 միավոր /4.01 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 4446 միավոր /392.24 հա/, որից Երևանում՝ 385 միավոր /34.22 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 2014 միավոր /218.79 հա/, որից Երևանում՝ 156 միավոր /42.39 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 112 միավոր /66.75 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /2.86 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 88 միավոր /74.36 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 22 միավոր /25.17 հա/:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 10339 միավորի /8246.35 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 489 միավոր /67.39 հա/, նվիրատվության գործարքներ՝ 866 միավոր /365.30 հա/, որից Երևանում՝ 68 միավոր /8.22 հա/ և փոխանակության գործարքներ՝ 89 միավոր /41.04 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /7.87 հա/:

Հանրապետությունում 2008թ. երկրորդ կիսամյակում, 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.6%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 18.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 32.3%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3625.45 հա, որից 3562.04 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 38.4%-ը կամ 3968 գործարքներ /2466.94 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 130 միավոր /29.78 հա/, իսկ 61.2%-ը կամ 6331 միավորը /5768.18 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 358 միավոր /37.60 հա/:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 40 գործարք /11.24 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	9	1.93	42	3.80	79	24.05	18	3.45	5	0.93	274	23.02	61	10.20
Արագածոտն	224	662.42	2	1.02	45	4.90	143	6.50	397	747.67	2	1.21	318	32.59	24	81.76
Արարատ	113	212.57	24	13.71	220	20.94	147	5.36	495	234.18	6	1.09	444	39.49	53	1.39
Արմավիր	113	375.21	7	0.95	10	0.94	146	5.13	666	3186.83	3	2.33	542	51.74	51	2.32
Գեղարքունիք	30	80.18	6	2.96	269	19.45	103	7.37	177	154.56	2	0.01	103	12.91	13	3.03
Լոռի	23	27.50	3	12.57	81	5.16	201	5.35	213	255.18	3	7.34	65	6.01	39	1.46
Կոտայք	371	699.18	9	1.59	284	17.17	267	16.44	836	458.87	1	0.17	744	67.10	116	10.82
Շիրակ	21	21.22	12	5.59	224	7.55	161	4.99	97	133.05	1	0.13	56	5.31	26	1.05
Սյունիք	6	16.89	1	0.85	16	1.51	41	2.36	80	61.64	3	1.25	21	1.68	7	0.31
Վայոց Ձոր	45	69.39	2	9.53	95	6.67	156	2.93	43	30.70	0	0.00	50	4.79	15	2.51
Տավուշ	35	37.68	10	1.58	67	3.84	76	6.14	128	65.78	0	0.00	62	4.82	10	4.50
Ընդամենը	981	2202.24	85	52.28	1353	91.93	1520	86.62	3150	5331.91	26	14.46	2679	249.46	415	119.35

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և ածուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Ածուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	95	19.56	9	1.93	24	0.76	62	16.87	35	10.23	0	0.00	0	0.00	18	3.04	17	7.19
Արագածոտն	16	0.16	0	0.00	2	0.06	14	0.10	394	670.48	220	658.22	2	1.02	43	4.84	129	6.40
Արարատ	34	2.65	5	1.11	7	0.30	22	1.24	470	249.93	113	212.57	19	12.60	213	20.64	125	4.12
Արմավիր	37	0.55	3	0.14	0	0.00	34	0.41	238	379.88	112	373.41	4	0.81	10	0.94	112	4.72
Գեղարքունիք	8	0.62	1	0.04	2	0.37	5	0.21	400	109.34	30	80.18	5	2.92	267	19.08	98	7.16
Լոռի	45	0.73	0	0.00	12	0.35	33	0.38	263	49.84	23	27.50	3	12.57	69	4.80	168	4.97
Կոտայք	65	3.73	2	0.24	6	0.34	57	3.15	851	727.97	356	696.49	7	1.35	278	16.84	210	13.29
Շիրակ	71	3.55	2	1.31	35	1.26	34	0.98	347	35.81	21	21.22	10	4.28	189	6.29	127	4.02
Սյունիք	6	0.86	1	0.85	0	0.00	5	0.01	58	20.75	6	16.89	0	0.00	16	1.51	36	2.35
Վայոց Ձոր	13	10.73	1	9.50	0	0.00	12	1.23	285	77.79	45	69.39	1	0.03	95	6.67	144	1.70
Տավուշ	35	1.64	1	0.04	19	0.63	15	0.97	153	47.62	35	37.68	9	1.54	48	3.22	61	5.18
Ընդամենը	425	44.78	25	15.16	107	4.07	293	25.55	3494	2379.64	961	2193.55	60	37.12	1246	87.87	1227	61.10

Հանրապետությունում 2008թ. երկրորդ կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 20 գործարքներ /8.69 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. երկրորդ կիսամյակում, 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 17.7%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 78.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 15.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 40.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 26.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 19.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 37.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեւր /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեւր /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	168	369.17	34.4	1987.0	218.1	264	185.49	365.0	12000.0	3668.3
Ապարան	1	0.93	209.4	209.4	209.4	26	10.88	86.5	2727.3	467.1
Թային	51	288.12	32.0	597.1	107.7	86	519.12	93.6	5494.5	487.2
Ծաղկահովիտ						11	26.87	79.5	1000.0	206.7
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	31	76.12	21.2	3064.4	832.2	209	94.49	335.1	10833.3	1896.0
Մասիս	66	124.14	29.7	2904.0	362.2	117	63.80	200.0	11904.8	2461.7
Վեդի	16	12.31	40.0	3050.0	330.6	163	73.93	207.0	10795.1	1675.4
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	31	65.15	30.1	1864.9	217.0	259	308.72	294.3	9090.0	1135.0
Բաղրամյան	48	274.35	21.3	622.1	56.9	93	2653.08	90.6	2561.1	660.1
Վաղարշապատ	33	33.90	31.6	1009.0	398.2	309	220.18	444.4	11764.7	2187.9
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						91	33.97	199.8	1875.0	428.9
Ճամբարակ	3	7.00	528.7	715.7	619.8	27	20.94	60.5	953.3	193.7
Մարտունի						9	2.25	51.1	2850.0	522.9
Սևան	3	2.49	231.3	831.4	563.2	2	0.29	52.2	2134.8	211.9
Վարդենիս	24	70.69	93.3	454.1	257.5	48	97.11	41.2	2575.1	319.7
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի	2	1.59	364.9	446.6	405.8	51	21.40	170.4	6424.2	1134.4
Գուգարք	10	4.63	90.6	1125.0	546.6	34	16.58	234.6	6065.9	1014.2
Սպիտակ						21	8.57	250.0	5555.5	561.4
Ստեփանավան	11	21.28	160.1	1233.2	513.6	51	40.63	90.6	1686.6	410.9
Տաշիր						56	168.0	45.3	1384.4	218.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	137	216.21	33.9	1642.9	311.2	377	190.71	279.3	11942.7	4388.4
Եղվարդ	147	308.28	35.3	2450.0	393.2	381	214.85	174.4	11971.8	3074.4
Հրազդան	72	172.00	33.3	2010.0	362.7	68	50.44	130.5	10256.4	1256.2
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	16	13.23	105.0	792.0	237.2	31	40.15	252.0	1693.1	485.4
Ամասիա	2	5.45	68.4	106.1	87.3	15	31.51	40.9	261.0	126.3
Անի	2	1.30	147.1	147.1	147.1	20	26.54	110.6	546.9	280.9
Աշոցք	1	1.24	313.0	313.0	313.0	16	11.66	58.5	215.8	120.7
Արթիկ						15	23.19	79.4	1428.6	191.8



Սյունիքի մարզ										
Գորիս	2	2.92	1073.1	1080.0	1076.6	34	21.73	92.6	1023.2	409.6
Կապան	3	8.17	325.2	340.7	336.9	10	7.90	120.0	841.6	256.6
Մեղրի						10	1.55	193.0	3000.0	553.1
Սիսիան	1	5.80	247.2	247.2	247.2	26	30.45	46.3	1977.4	279.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	39	54.64	37.1	704.3	217.2	36	26.63	125.0	10000.0	1391.8
Վայք	6	14.76	35.4	240.0	70.3	7	4.07	58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ	11	11.91	161.5	929.5	379.0	27	7.71	213.3	3783.8	420.5
Իջևան	24	25.77	90.0	9200.0	1140.7	15	16.08	267.5	9454.5	919.0
Նոյեմբերյան						86	41.99	46.7	7368.4	648.7

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	21	20844.0	173.1	40007.4	950.8	283	263505.5	130.7	22200.0	2572.5
Ապարան	4	3829.0	189.0	268.7	228.6	17	24850.0	124.1	609.6	223.9
Թային	14	18907.0	75.6	302.0	101.2	14	29242.0	63.2	1454.8	114.1
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8	3	6849.0	60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ	92	103341.0	115.2	820.0	341.5	97	96055.3	173.9	7140.3	927.0
Մասիս	119	100864.0	267.3	1980.2	741.0	252	201243.0	187.5	25000.0	1217.2
Վեդի	2	2197.0	191.3	232.1	211.7	92	95495.0	126.1	5000.0	680.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	5776.0	114.1	652.0	348.0	193	196298.0	131.6	9090.9	1219.5
Բաղրամյան						9	12000.0	100.0	833.3	155.7
Վաղարշապատ	6	3620.0	1914.0	4002.0	3219.0	335	304392.0	197.4	26528.4	1552.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	295.0	2762.7	2762.7	2762.7	24	21861.0	186.6	1084.3	398.9
Ճամբարակ						16	17915.0	71.3	2286.2	109.3
Մարտունի	152	64420.0	108.3	122.3	116.6	35	49883.0	119.3	5000.0	272.5
Սևան	112	123581.0	188.1	690.6	465.4	18	18232.0	240.0	3110.4	184.4
Վարդենիս	2	2550.0	31.7	378.4	205.1	10	21181.0	72.5	987.2	134.4
Լոռու մարզ										
Ալավերդի						9	5590.0	114.3	1388.9	152.4
Գուգարք	48	25772.0	159.6	4976.4	2341.1	29	20406.0	77.9	14083.3	622.6
Սպիտակ						11	13740.0	104.9	1348.3	151.4
Ստեփանավան	21	22276.0	72.7	412.4	226.6	10	14450.0	88.2	1666.7	121.0
Տաշիր						5	5023.0	45.3	400.0	72.1
Կոտայքի մարզ										
Արուսյան	248	134371.6	272.0	4998.0	1350.8	335	302384.0	264.5	35353.5	2074.9
Եղվարդ	11	9380.0	1485.3	3381.0	2293.3	354	311063.0	173.6	27000.0	2320.7

Հրազդան	19	24600.0	274.3	3234.0	632.5	54	56704.0	117.7	34848.5	1352.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	134	36526.7	70.0	5714.3	2182.2	30	25285.2	113.6	18750.0	334.0
Ամասիա						1	3780.0	45.3	274.7	70.9
Անի	9	5970.5	45.8	525.0	302.3	7	8883.0	67.9	180.6	101.6
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	46	20411.0	29.7	2100.0	342.0	17	13778.0	111.8	5000.0	198.4
Սյունիքի մարզ										
Գորիս						11	8651.0	112.2	1700.0	261.6
Կապան	10	12688.0	115.5	422.3	272.2	4	2549.0	67.9	2638.9	217.2
Մեղրի	2	900.0	311.1	311.1	311.1	2	1470.0	68.5	632.9	134.1
Սիսիան	4	1500.0	581.0	608.0	601.3	4	4080.0	123.5	875.0	153.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	16	9084.0	116.6	762.5	694.4	29	29213.0	96.7	7659.6	335.8
Վայք	79	57644.6	126.0	1324.4	878.3	17	15470.0	120.7	1448.3	127.8
Տավուշի մարզ										
Բերդ						2	667.0	75.8	810.0	90.4
Իջևան	43	29964.0	79.2	2750.0	1271.1	53	40786.0	74.1	14423.1	474.6
Նոյեմբերյան	5	2187.0	79.8	468.8	387.6	7	6780.0	125.0	1948.1	149.8

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 69 գործարքներ 12.46 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ /0.38 հա/ Արագածոտնի, 13-ը՝ /1.73 հա/ Արարատի, 46-ը՝ /6.28 հա/ Լոռու, 2-ը՝ /1.00 հա/ Արմավիրի և 1-ական /0.06 հա/ Գեղարքունիքի, /3.01 հա/ Շիրակի մարզերում:

2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5987 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 57.4%-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 1.9%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 1.6%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 361 բնակարանների, 274 անհատական բնակելի տների, 2348 հասարակական և 332 արտադրական նշանակության օբյեկտների, 2563 միավոր /28315.35 հա/ հողերի և 109 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 118 վարձակալության գործարքների, այդ թվում 47 միավոր /0.41 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 45.9%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 54.6%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 28315.35 հա հողերից 22.21 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 28293.15 հա հողերի 392.08 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.02 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 17936.31 հա, որից 17871.26 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 11001.81 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական

նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	1274.09	65	317.05
Արարատ	3	1200.00	86	149.05
Արմավիր	0	0.00	58	433.76
Գեղարքունիք	8	427.98	132	760.63
Լոռի	4	115.00	86	387.56
Կոտայք	6	1291.00	76	311.52
Շիրակ	6	543.00	271	845.85
Սյունիք	8	6024.34	135	11846.92
Վայոց Ձոր	4	126.40	51	1508.21
Տավուշ	0	0.00	20	53.34
<b>Ընդամենը</b>	<b>45</b>	<b>11001.81</b>	<b>980</b>	<b>16613.89</b>

2008թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12893 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. երկրորդ կիսամյակում, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 1.7%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 12.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.1%/, առանձնատների /26.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.0%/ և հողերի /13.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5066 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել է 0.7%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.0%-ով:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 915 գործարքներ, որից 629՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 71.9%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 18.3%-ն՝ անհատական բնակելի տների, 4.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.9%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.6%-ն՝ ամառանոցների, 0.4%-ն՝ ավտոտնակների և 2.5%-ը՝ հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 37.2%-ով, ընդ որում Երևանում՝ 31.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 46.2%-ով :

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 2275.38 հա մակերեսով հողեր, որից 29.62 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 86.8% կամ 1975.86 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.58 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 784.66 հա, որից 780.64 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 24 և 18 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է

0.1%: 2008թ. առաջին կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 19.2%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 40.8%-ով: 2008թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում՝ 19.0%:

2008թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 14152 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 12.0%-ով, իսկ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 3.6%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.5%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***